# SLIDE
magazine

№07 2011

**ՀԱՄԱՐԻ ՀՅՈՒՐԸ**
ՎԻԿՏՈՐ ՄԵՐԺԱՆՈՎ

**ՃԱՄՓՈՐԴՈՒԹՅՈՒՆ**
ԿԱՆԳԱՌԸ՝ ԲՐԱԶԻԼԻԱ

**ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ**
**ԷՋԵՐԻՑ**
ՀԱՅԱՏՅԱՑՆԵՐԸ

**ԴԱՋՎԱԾՔԸ՝ ԶԱՐԴ,**
**ԴԱՋՎԱԾՔԸ՝ ԽԱՐԱՆ**

**ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ**
ԱԿԱՄԱ
ՈՃՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ
ՏԱՐԲԵՐԱԿՈՎ

**ՀԱՆԴԻՊՈՒՄ**
ԱՐՄԵՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՅԱՆ

ISSN 1829-2070
10003
9 771829 207000














**66| ՀԱՆԴԻՊՈՒՄ**
ԱՐՄԵՆ ՄԱՆԴԱԿՈՒՆՅԱՆ

**72| ՀԱՅՔ Ի ՊՈԼԻՍ**
Կ.ՊՈԼՍԻ ԲԱՂՆԻՔՆԵՐԻ ԳԱՂՏՆԻՔՆԵՐԸ

**74| 20 ՀԱՐՑ, 20 ՊԱՏԱՍԽԱՆ**
ԷԴՈՒԱՐԴ ԹՈՓՉՅԱՆ

**76| ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ**
ԺԻՐԱՅՐ ՂԱՐԻԲՅԱՆ

**77| ԲԱՆՔ ՄԵԾԱՑ**
ՇԻՐՎԱՆԶԱԴԵ

**78| ԴԱՋՎԱԾՔԸ՝ ԶԱՐԴ, ԴԱՋՎԱԾՔԸ՝ ԽԱՐԱՆ**

**88| ԵՐԿՈՒ ՍԵՐՈՒՆԴ, ԵՐԿՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ**
ՊՏՈՒՂԸ ԾԱՌԻՑ ՀԵՌՈՒ ՉԻ ԸՆԿՆՈՒՄ

**91| ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ**
ԵՐԵՎԱՆՅԱՆ 5-ՐԴ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՓԱՌԱՏՈՆ

**92| ԻՐԱԿԱՆՆ ՈՒ ԱՌԱՍՊԵԼԱԿԱՆԸ**

**94| SLIDE PHOTO**
ԻՆԳԱ ԻՎԱՆՈՎԱ

**100| ԳՐՔԵՐ**
ՍՏԵՓԱՆ ՓԱՐԹԱՄՅԱՆ

**102| ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ**
"MEETING IDEAS"

# "MEETING IDEAS"

## Հայ-վրացական միջմշակութային նկարչական սիմպոզիում

*անդրադարձը՝* ***ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻ***

Գեղանկարչություն, երաժշտություն, պար, կիրք... արվեստը կարծես այս ամենի համախմբումն է...

Սեպտեմբերի 13-ին «Պողոսյան պարտեզներ»-ում կայացավ "Meeting Ideas" հայ-վրացական միջմշակութային նկարչական սիմպոզիումը, որն իր շուրջ էր համախմբել մշակույթի ինչպես արդեն բավական հայտնի, այնպես էլ սկսնակ գործիչների՝ Արա Սարգսյանի անվան Գեղարվեստի Ակադեմիայի և Թբիլիսիի Ապոլոն Կաթուբելաձեի անվան Գեղարվեստի Պետական ակադեմիայի ուսանողներին ու շրջանավարտներին:

Արդեն օրվա կեսից այգում ակտիվ եռուզեռ էր, նկարիչներն իրենց գործերն էին պատրաստում ցուցադրության, երաժիշտները փորձ էին անում: Երեկոյան սկսվեց բացօթյա ցուցադրությունը, որին հաջորդեց սիմպոզիումի մեկնարկը: Այն ուղեկցվում էր երաժշտական բեմադրությամբ: Հայ և վրաց նկարիչներին իրենց հիասքանչ պարով ոգեշնչում էին բալետի առաջատար մենապարուհի Ժակլին Սարխոշյանը, ինչպես նաև Վլադիմիր Ապրեյանն ու Վահագն Ազիզբեկյանը: Այգու տարբեր հատվածներում կենդանի արձանները կարծես հսկում էին օդում սավառնող ստեղծագործական ոգին: Նկարիչները նկարում էին մեծ ոգևորությամբ, ամբողջովին հափշտակված ստեղծագործական էմոցիոնալ պոռթկումներով... Իր տեսակի մեջ լինելով առաջինը՝ այս հետաքրքիր միջոցառումը մի նոր փուլ, նոր հարթակ նախապատրաստելու առաջին քայլերից մեկը հանդիսացավ ինչպես մեր քաղաքի մշակութային անցուդարձին նոր շունչ հաղորդելու, այնպես էլ հայ և վրաց արվեստագետների միջև հաղորդակցման եզրերի ու ստեղծագործական երկխոսության առավել ամուր և նպաստավոր հող նախապատրաստելու գործում: Սիմպոզիումին օրեր անց հաջորդեց հայ և վրաց նկարիչների աշխատանքների ցուցադրությունը «Նարեկացի արվեստի միություն»-ում:

Կազմակերպիչ Արուսյակ Բալդրյանի խոսքերով նրա մեծ ցանկությունն է, որ այս միջոցառումը կրի շարունակական բնույթ, ունենա իր դրական ազդեցությունը երկու ազգերի երիտասարդ ստեղծագործողների հետագա համագործակցության դաշտում: ■







